



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ

ՀՀ, ք. Երևան, Արմենակյան 127

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Միկրոէներգաարտադրող կայանը սպառողի սպառման համակարգին միացնելու համար

«12» 03 2026թ.
«S-480/1-0,4/0013»

Սպառող/ենթասպառող: ՀՀ ՆԳՆ Փրկարար ծառայության Տավուշի մարզային վարչություն

Պատճենը: Հաշվարկային կենտրոն> ՓԲԸ գլխավոր տնօրենի պարտականությունները կատարող և Հարությունյանին; Տեխնիկական տնօրենի տեղակալ, ԷԷՀ և ԱՀ սպասարկման ղեկավարամենտի պետ Մ.Կուդոյանին;<Աղստև> մ/6

Օբյեկտի գտնվելու վայրը: Տավուշի մարզ, ք.Իջևան Արցախյան պող.4
Տեխնիկական պայմանների տրամադրման նպատակը:

- 1) Միկրոէներգաարտադրող կայանի միացում սպառման համակարգին
- 2) Միկրոէներգաարտադրող կայանի հզորության ավելացում կամ նվազում նախկինում տրված տեխնիկական բնութագրերում նշված հզորությունից.
- 3) Միկրոէներգաարտադրող կայանի միացման սխեմայի փոփոխություն

Կայանի պահանջվող հզորությունը: 5 կՎտ

Լարման մակարդակը: 0,4 կՎ

Ենթասպառողների առկայությունը: առկա է

Կայանի տեսակը (միաֆազ, եռաֆազ): եռաֆազ

1. Հաշվառման քարտը: 0637782
2. Էլ.ցանցին միացման պատվեր: -----
3. Սպառման համակարգի սնման աղբյուրը: <Քաղաք-9> 6 կՎ 0Գ
4. Ինքնավար էներգաարտադրող-բաշխող կայանի միացման կետը: ԳԵ-1603 Ե/Կ-ի 0,4 կՎ վահան
5. Կայանի տեսակը: Արևային ֆվ /միկրոէներգաարտադրող/
6. Դիմումատուի կողմից իրականացվող աշխատանքները.
 - 6.1. Տեղադրել համապատասխան հզորության փոխակերպիչ/ինվերտոր/;
 - 6.2. Փոխակերպիչները իրենց ցանցային որակական հատկանիշներով պետք է համապատասխանեն ԳՕՍՏ 32144 պահանջներին:
 - 6.3. Կայանի միացումը պետք է իրականացվի սույն տեխնիկական բնութագրի 4-րդ կետով որոշված միացման կետից՝ 0,4 կՎ լարման էլեկտրահաղորդման գծի միջոցով /կտրվածքը, երկարությունը և էլեկտրահաղորդման գծի տիպը իրականացնել նախագծով/;
 - 6.4. Միացման կետում տեղադրել ավտոմատ անջատիչ և ՎՎ տեղանստի հոսանքով:
 - 6.5. 0,4 կՎ լարման հաղորդման գծի անցկացման և տեղադրման սխեման և երանակը պետք է համաձայնեցվի ՀԷՑ ՓԲ ընկերության համապատասխան շահագործման շրջանի պետի կամ մասնաճյուղի գլխավոր ինժեներների և համապատասխան շահագրգիռ կազմակերպությունների հետ:
 - 6.6. Նախատեսել հողանցման կոնտուր՝ բոլոր մետաղական մասերը հողանցել և սպառողի վրա 4 օմ դիմադրություն:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԲԸ
 Տավուշի մարզի Իջևան քաղաքում
 Միկրոէներգաարտադրող կայանի միացման
 տեխնիկական պայմանների
 N _____ « _____ » 20 _____ թ.

- 6.7. Նախատեսել պաշտպանություն (ավտոմատիկա), որը ցանցի լարման բացակայության ժամանակ կապահովի հակադարձ լարման բացակայությունը դեպի բաշխման ցանց:
- 6.8. Կայանի միացման էլեկտրական մասի շինարարական աշխատանքները իրականացնել համաձայն էլեկտրակայանների, ցանցերի և սպառողների տեխնիկական շահագործման կանոնների:
- 6.9. Արևային կայանի էլեկտրական մասի նախագիծը համաձայնեցնել «ՀԷՑ» ՓԲ ընկերության տեխնիկական տնօրինության, «Հաշվարային կենտրոն» ՓԲ ընկերության և համապատասխան այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ:
- 6.10. Կայանի շինարարությունը իրականացնել լիցենզավորված կազմակերպության միջոցով՝ համաձայն ՀՀ կառավարության 30 նոյեմբերի 2023 թվականի N 2106-Ն որոշման:
- 6.11. Անհրաժեշտ է ՀԾԿՀ-ի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N 523-Ն որոշման կանոնների 257 կետի 3-րդ ենթակետով սահմանված կարգով վճարել №2474663158160420 հաշվի համարին կանխավճար:
- 6.12. Էլեկտրական էներգիայի հաշվառումը իրականացնել Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրային կանոններին համապատասխան՝ հաշվառքի սարքերը փոխարինելով դարձափոխչային բազմասակագնային էլեկտրոնային հաշվիչով:
- 6.13. Սպառման համակարգի տեխնիկական պարամետրերի (լարման մակարդակ, հզորության նվազեցում, էլ. սնման կետ) փոփոխման դեպքում սույն կայանի միացման ՏՊ-ը կհամարվի անվավեր կամ համապատասխան հզորության չափով նվազեցում կկատարվի միացված արևային կայանի հզորությունից:
- 6.14. Այն դեպքերում, երբ կայանը հանդիսանում է միացման կետում լարման արժեքների շեղման պատճառ՝ ԳՕՍՍ 32144 սահմանված երկարատև թույլատրելի տիրույթից դուրս, որտեղ մինչև միացումը լարման արժեքները գտնվում էին ԳՕՍՍ 32144 սահմանված երկարատև թույլատրելի տիրույթում, անհրաժեշտ է սահմանափակել կայանի լարման աշխատանքային տիրույթը՝ համապատասխանեցնելով լարման որակի ԳՕՍՍ-ով սահմանված երկարատև թույլատրելի լարման աշխատանքային տիրույթին, հակառակ դեպքում կայանը ենթակա է անջատման բաշխման ցանցից:
- 6.15. Շին-մոնտաժային աշխատանքներ իրականացնել լիցենզավորված կազմակերպության կողմից էլեկտրատեղակայման կանոններին և կարգավորող տեխնիկական փաստաթղթերին համապատասխան:
- 6.16. Ենթասպառող լինելու դեպքում անհրաժեշտ է ներկայացնել սպառողի համաձայնագիրը:
- 6.17. Նախքան կայանի միացնելը՝ հաշվառքի սարքերի տեղադրումը իրականացնել համաձայն ՀԾԿՀ 2019թ.դեկտեմբերի 25-ի N 516-Ն որոշմամբ հաստատված ՀՀ էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոնների 47 կետի՝ համաձայնեցնելով Տեխնիկական տնօրենի տեղակալ, էէՀ և ԱՀ սպասարկման պետի հետ:
- 6.18. Միացումը կիրականացվի «ՀԷՑ» ՓԲ ընկերության տեխնիկական տնօրինության կողմից տրված լարման կարգադրության դեպքում:
- 6.19. Տեխնիկական պայմանների կատարման ժամկետը 1(մեկ) տարի է, եթե ԷՄԱ և ԷԲՑ կանոններով սահմանված փոփոխություններ ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը չի նախատեսում:

«ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից «ՀԱՄԱԶԱՅՆՎԱԾ» Տեխնիկական տնօրեն Դավիթ Գրիգորյան

«ՀԱՄԱԶԱՅՆՎԱԾ» ՓԲԸ
 ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՆՏՐՈՒՆՑՈՒՄ
 ԱՐՏԱԴՐՍԵՆՆԻԿԱԿԱՆ ԲԱՇԽՆ
 (ստորագրություն, կնիք)
 N _____ « _____ » _____ 20 _____ թ.